ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«02» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 00098

Ձեռնարկողը՝ *«Առափ» ՍՊԸ*
Արարատի մարզ գ. Ավշար,
Բարեկամության փ. տուն 13

Գործունեությունը՝ ***Առափի ավազի հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարզյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 00098

< 02 > 11 **2020թ.**

Արարատի մարզի Առափի ավազի հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Առափ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզի Նոյակերտ համայնք

Արարատի մարզի «Առափի» ավազի երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն:

Առափի հանքերևակման տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Նոյակերտ համայնքի վարչական տարածքում՝ բնակավայրից 3.3կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախափնյա ողողահունային մասում: Մոտակա բնակավայրերն են՝ Արարատ և Վեդի քաղաքները, Լուսառատ, Խորվիրապ, Եղեգնավան և Նոյակերտ համայնքները: Երևակման տարածքի հողերը գյուղատնտեսական նպատակային նշանակության են, իսկ ըստ գործառնական նշանակության՝ այլ հողատեսքեր են:

Նախատեսվող գործնեության համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա ենթակետի այն հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Առափի ավազի հանքերևակման տեղամասում նախատեսվում է ուսումնասիրել շինարարական ավազի արտադրության համար՝ որպես հումք: Հանքերևակման օգտակար հանածոն իր որակական հատկություններով պետք է բավարարի ՀՍՏ ГОСТ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների ստացմանը:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Հայցվող տարածքը զբաղեցնում է 4,477հա մակերես, որի ծայրակետային կոորդինատները բերված են ARM WGS 84 համակարգով, սահմանները վերցրվել են Արաքս գետի ափից ամենաքիչը 30-35մ հեռավորության վրա:

Կոորդինատային համակարգ ARM WGS 84					
h/h	X	Y	h/h	X	Y
1.	4408144	8469231	1.	4407885	8469804
2.	4408225	8469286	2.	4407822	8469753
3.	4408071	8469542	3.	4408020	8469518

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, հետախուզական փորվածքների անցման, նմուշարկման փորձնական արդյունահանման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները V կարգի ամրության ապարներում կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով՝ 60մ^3 ընդհանուր ծավալով:

Նախատեսվում է 6 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը նախատեսվում է մինչև 5.0մ, կտրվածքը՝ 2.0մ^2:

Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ձեռքի աշխատանքով: Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը վերցվում է 48մ^3:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 40.0մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասի ավազի ծավալային զանգվածը, ինչպես նաև՝ հումքի փխրեցման գործակիցը:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հետախուզահորերից վերցնել նմուշներ:

Նախատեսվում են նաև վերցնել՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար 6 նմուշ, քիմիական անալիզների համար 3 նմուշ և միներալոգա-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար 3 նմուշ: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3 x 0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30 կգ-ի:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ավազի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող երևակման տարածքից կատարել փորձնական հանույթ՝ մոտ 200մ^3 ծավալով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ "ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ"
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նշված մեծածավալ տեխնոլոգիական նմուշը պատվիրատուի ջարդիչ-տեսակավորման արտադրամասում կենթարկվի վերամշակման, որի ընթացքում կմշակվի ավազի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ավազի հատիկային կազմը: Փորձնական հանույթի կոնկրետ տեղը կորոշվի կատարված երկրաբանահետախուզական աշխատարքների արդյունքներով: Վերոնշյալ աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեխանիկական եղանակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նաև նախատեսվում է կատարել հանքերևակման ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Նախագծված երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովվելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի համապատասխան հրահանգների բոլոր պահանջները:

Բերրի հողի շերտի բացակայության պատճառով երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, նախատեսվում է իրականացնել խախտված տարածքների հարթեցում:

Տարածքի հարթեցման աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 50.000 դրամ գումար:

Քանի որ, ուսումնասիրության դաշտային աշխատանքների իրականացման նպատակով նոր ճանապարհներ չեն կառուցվելու, ուստի կօգտագործվեն գոյություն ունեցող ճանապարները և ճանապարների վերականգնման խնդիր չի առաջանա:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տարածքում չիրականացնել նավթամթերքների պահեստավորում, տեխնիկաները լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում,
- դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպել տեխ. սպասարկման կայաններում,
- կենցաղային աղբի տեղափոխել մոտակա աղբահավաք կետերում,
- մեքենաների վրա արտանետվող վտանգավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով տարվա չոր և շոգ եղանակներին փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, մուտքային ավտոճանապարհ և այլն) ինտենսիվ ջրում: Ջուրը նախատեսվում է բերել համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն՝ մոտակա բնակավայրի ջրամատակարարման ցանցերից,
- կեղտաջրերի հավաքումը պարզարանում, որը հետագայում կդատարկվի հատուկ ծառայության ուժերով,
- բացառել ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղբոտումը, ջրային ռեսուրս կեղտաջրերի արտանետումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը,
- կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
- բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ հիմք ընդունելով ՀՀ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՓՈՐՁԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշման դրույթները,

- խախտված տարածքների հարթեցում, 90մ^2 /կծախսվի 50000դրամ/:

Ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Առափ» ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- դաշտային աշխատանքների ժամանակահատվածում մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամյա հաճախականությամբ,
- փորձնական հանույթի ընթացքում փորձնական բացահանքի հատակից և մոտեցման ճանապարհի երթևեկելի մասից նավթամթերքների մոնիթորինգի իրականացում՝ ամիսը 1 անգամ,
- Արաքս գետի ջրերի մոնիթորինգ՝ տարին մեկ անգամ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Պատճառաբանական մաս. երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը՝ 4.477հա տարածքում իրականացվելիք երկրաբանահետախուզական աշխատանքներին:

Նոյակերտ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ու պաշտպանության նախարարությունները, Արարատի մարզպետարանը, ինչպես նաև ՀՀ ԱԱԾ և ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն:

Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման,

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնելով լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

-Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացումն անհրաժեշտ է համաձայնեցնել համապատասխան իրավասու մարմինների հետ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Առափ» ՍՊԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Առափի ավազի հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան